

վարդապետութեան (աւելի ճիշտը Բանայի վարդապետութեան) և երբ ազատ քաղաքացիական իրաւունք ստանայ բարիականութիւնը Պարսկաստանում, այն ժամանակ հաւանական է որ գեաւորների մեծագոյն մասը պիտի հետևի այդ նոր կրօնին. որովհետև նրանց ամենակրթութեամբ տարնն անգամ հակուած է դէպի այդ նոր կրօնը:

Վերջացնելով իմ այս փոքրիկ յօդուածը գեաւորների մասին, մեր ազգագրագէտների ու մեր հին պատմութիւնը ուսումնասիրողների ուշադրութիւնն եմ հրաւիրում Ասիայի այս հին ու փառաւոր ազգի փոքրիկ մնացորդների վրայ. այն ազգի որի ազգեցութիւնը անցեալում անպայման եղել է մեզ վրայ շատ մեծ. որի հետ մեր անցեալ կեանքն ու պատմութիւնն է շաղկապուած եղել մինչև այն ու օրերը, երբ թագն ու պալատը փոխանակեցինք քուրճի ու ճգնարանների, իսկ սուրը՝ խաչերի ու այդպէս դարերի համրաքալ ընթացքում ճնշուած ծանրութեամբ մեռանք տանջուեցինք և մինչև օրս, որովհետև երբիստոնայ եղանք, բաժանուեցանք մեզ կրօնակից և ցեղակից պարսերից: Այստեղ մեր ազգագրագէտները շատ բան կը գտնեն մեր անցեալից, մեր անփառունակ կորած, քրիստոնէութեան զոհ դարձած անցեալից:

Սար—Յով.

## ՔՆՆԵԳԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏՆԵԼԽՕՍՈՒԹԻՒՆ

Գր. Վանցեան՝ պատմական քերականութիւն արեւելեան հայոց լեզուի  
Թիֆլիս, 1906, դ. 75 կ.

Մեր այն ուսուցիչները, որոնք ուզում են հայոց քերականութիւն աւանդելիս ունենալ պատմական—փիլիսոփայական որոշ նախապատրաստութիւն մեր նոր լեզուի մասին—մեծ օգուտ կը ստանան պ. Գր. Վանցեանի այս աշխատութիւնը:



նից, որի մասնագիտական քննադատութիւնը մեր նպատակներից դուրս է: Մենք միայն յանձնարարում ենք մեր ուսուցողների ուղադրութեան այդ գիրքը, որի մէջ ի մի են ամփոփուած շատ նիւթեր արեւելահայ լեզուի, մասին, և որոշ սխառեմի են վերածուած: Այս գրքոյկը կարող է լրացնել անցեալ համարում մատնանիշ արած պ. Մ. Արեղեանի քերականութիւնը:

N.

Նախագիծ կազմագրութեան և ծրագիր մայրոց եկեղեցական տարական դպրոցների, Թիֆլիս, 1906 թ. գ. 30 կ.

Անցեալ 1905 թ. յուլիսի 20-ին Կաթողիկոսի կոնդակով նշանակուեց մի յանձնաժողով «վասն մշակելոյ կանոնադրութիւն և ծրագիր մի»: Այդ յանձնաժողովը մշակեց կանոնադրութեան հիմնական կէտերը և օգոստոս ամսում հրաւիրեց ուսուցիչներից և ձեռնհաս անձերից մի ժողով, կարծիք յայտնելու յանձնաժողովի մշակած սկզբունքների մասին: Ժողովը ընտրեց մասնաժողով, որի մշակած կանոնները և ծրագրները պէտք է նախ քննուէին ուսուցչական—հոգաբարձական պատգամաւորների համագումարում ապա հաստատուէին Կաթողիկոսից: Սակայն մեր ազգի տէր ու տնօրէն բիւրոկրատները ուղեցին այդ համեստ կուտուրական գործում էլ իրանց քիթը կոխել և տրասօրէն ամեն բան տակնուվրայ անել. բոյկոտ յայտարարուեց համագումարին, կենդրոնական ժողով պահանջուեց զանազան քալազեօղութիւններ անելու և «յեղափոխական» իմաստակութիւնների մասին պոռոտախօսելու նպատակով: Ինչպէս ամեն մի ձեռնարկ, որին ձեռք է մէկնում «սարսափելի տղերանց» խժըպկը, այնպէս է կենտրոնական ժողովը վիժեց: Եւ անա աւերի և ապականութեան ասպետները այն արեցին որ դպրոցական քաօսն էլ մեզանում մնաց անփոփոխ:

Արդ, դոնեա իբրև մի ժամանակաւոր ուղեցոյց մեր ողբալի «Եկուտուրական» սուվբուրի մէջ, թող ծառայէ այս նախագիծը, որի պակասաւոր. կողմերը մատնանիշ կ'անի մի տարուայ փորձը:

Փ.